

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ МНОГОТОМНИКА

*Аветисян Г. А., Агаян Ц. П., Акопян А. М., Аракелян Б. Н., Галоян Г. А.,
Еремян С. Т., Иоаннисян А. Г., Нерсисян М. Г., Хачикян Л. С.*

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Е Р Е В А Н 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏԱՌԻԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏԱՌԻԹՅՈՒՆ

ԲԱԶՄԱՀԱՏՈՐՅԱԿԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ

*Աղայան Ծ. Պ., Առաքելյան Բ. Ն., Ավետիսյան Հ. Ա., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ա. Տ.,
Խաչիկյան Լ. Ա., Հակոբյան Ա. Մ., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ.*

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Ե Ր Ե Վ Ա Ն 1984

ՀԱՅՈՑ ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲԵԱՎՈՐՈՒՄԸ

1. ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Գրերի գյուտն իր բացառիկ և մնայուն նշանակությամբ հանդիսացավ հայ ժողովրդի մշակութային ստեղծագործության ամենախոշոր և ամենափառավոր իրողությունը, որն իր մեծ և բազմակողմանի դերը կատարում է դարեր շարունակ: IV դարի վերջերին հայկական գրերի ստեղծումը դարձել էր անհետաձգելի անհրաժեշտություն: Հայկական գրերն անհրաժեշտ էին դպրոց, դպրություն ստեղծելու, նոր առաջացած կրոնական, ֆեոդալական գաղափարախոսության ձևավորումը և հաղթանակը ապահովելու համար:

Գիրը և գրականությունը պետք է միջոց դառնային վաղ ֆեոդալական մշակույթն իր տարբեր բնագավառներով ստեղծելու և զարգացնելու և այդ ամենով հայ ժողովրդի քաղաքական, կրոնագաղափարական և մշակութային ինքնությունը պահպանելու համար:

Հայ գրի դպրության անհրաժեշտության գիտակցությամբ համակված էին ինչպես Հայոց թագավոր Վռամշապուհը, նույնպես և երկրի հոգևոր առաջնորդ Սահակ Պարթևը: Հայ գրերը լեզվահնչունական կատարյալ համապատասխանությամբ և ճշտությամբ ստեղծեց հայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցը (361—440): Մաշտոցը «կարճագատ» Վարդանի որդին էր, Տարոն գավառի Հացեկաց գյուղից¹: Այդ ժամանակ Հայաստանում, ինչպես հելլենիս-

¹ Կորյուն, Վարդ Մաշտոցի, հրատ. և թարգմ. Մ. Աբեղյանի, Երևան, 1941, Մաշտոցի «Մեսրոպ» անունը հանդիպում է ոչ թե նրա կենսագիր Կորյունի մոտ, այլ Խորենացու Պատմության և «Պատմութիւն սրբոյն Ներսեսի Պարթևի» («Սոփիքը Հայկական», 2, Վենետիկ, 1853, էջ 83, 110) գրվածքում: Մ. էմինը ենթադրում է, որ Մաշտոցը ծագում էր Մամիկոնյանների նախարարական տոհմից (տե՛ս «Исследования и статьи», Н. О. Эмина, М., 1896, էջ 206): Լեոն կարծում է, որ «Որդի Վարդանայ» նշանակում է զավակ Եանազատ անվանվող գյուղական դասակարգի» (հ. Ա., էջ 679): Հ. Աճառյանը կարծում է, որ Բուզանդը «կարճագատ» բառով նշանակում է դասակարգային կալվածատիրական մի աստիճան և այդ բառը պիտի ծագած լինի «կարճ»՝ «փոքր, համառոտ» և «ազատ»՝ «ազնվական» բառերից, ուստի և նշանակում է «փոքր ազատ, երկրորդական կամ աննշան ազնվական»: Հ. Աճառյանն այնուհետև հետևություն է անում. Մաշտոցը լազնվական չէր, բայց կարող էր լինել «կարճագատ» (տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, 1968, էջ 72, 87): Իսկ Հ. Մանանդյանը գտնում է, որ չնայած... Անանուն ժամանակագրության մեջ ասվում է, որ «Մեսրոպը Երանելիի ի Հացեկաց Տարանայ, յազատ տանէ»: Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 389), սակայն դրա մասին տեղեկություն չեն տալիս ոչ Կորյունը, ոչ էլ Փարպեցին և հետևելով Փավստոսի մի վկայության, որ Հացեկացն անվանված է «կարճագատների» գյուղ (Գ, ԺԹ), նշում է, որ Մաշտոցը «արտոնյալ այն ազատ գյուղացիների դասիցն էր, որոնք պարտավոր էին ծառայել ռամիկ հեծելազորքի շարքում» (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 248):

տական ժամանակաշրջանում, դեռևս նախկինի պես կրթությունը հունարեն էր, չնայած նրան, որ ուսուցումը և եկեղեցական արարողությունները տարվում էին նաև ասորերեն: Պատանի Մաշտոցը կրթությունն ստացել էր Տարոնում, «հելլենական դպրութեամբ»²:

Մեսրոպ Մաշտոցը գիտեր հունարեն, պարսկերեն և ասորերեն, իսկ վրացերենի վրա, ինչպես նշում է Հ. Աճառյանը, գոնե այնչափ գաղափար ուներ, որ կարողացավ կազմել վրացերեն այբուբենը³:

Կրթությունն ավարտելուց հետո Մաշտոցը Տարոնից գալիս է Վաղարշապատ և ծառայության անցնում արքունի դիվանում՝ Առավանի հազարապետության օրոք իբրև զինվոր և գրագիր⁴: Սակայն Մաշտոցը կարճ ժամանակ մնաց արքունի ծառայության մեջ: Կորյունը գրում է, որ Մաշտոցը «տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին» և «իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին»: Այնուամենայնիվ նա նախընտրեց հոգևորականի կյանքը⁵: Մաշտոցն իր աշակերտների հետ միասին գնում է Գողթան գավառ և այնտեղ զբաղվում քարոզչությամբ⁶:

Այս քարոզչական գործունեության ժամանակ Մեսրոպ Մաշտոցը դժվարությունների հանդիպեց մայրենի լեզվով եկեղեցական գրքեր չլինելու պատճառով և «միտքը դրեց մի հնարք գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել» և աշխատանքի անձնատուր լինելով՝ գանազան փորձերով շարշարվում էր⁷:

Գողթան գավառից 393 թ. Մաշտոցը վերադառնում է Այրարատ և ներկայանում կաթողիկոս Սահակ Պարթևին, որը հավանություն է տալիս Մեսրոպի մտահղացմանը՝ ստեղծել հայերեն գիր, դպրոց, դպրություն և եկեղեցական արարողությունները կատարել հայերեն: Այս առթիվ գումարվում է հատուկ ժողով, որին բացի Սահակից ու Մեսրոպից ներկա էին նաև Հայոց բոլոր եպիսկոպոսները: Ժողովականները որոշում են «հայ ժողովրդի համար նշու-

2 Փարպեցի, Ա, Ժ: Կեն գտնում է, որ Մաշտոցն ուսումն պոել է ներսես կաթողիկոսի քացած դպրոցներից մեկում: Հ. Աճառյանը քննելով եղած աղբյուրները գալիս է այն եզրակացության, որ «Մեսրոպը ներսեսի աշակերտը չի եղած, իսկ իր ուսուցչի անունը հայտնված չէ մեզ» («Հայոց գրերը», էջ 75):

3 Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 78—79: Գիտնականը, —մերժելով Ն. Ակիլյանի այն կարծիքը, թե Մեսրոպի կրթության «հիլենիստական շրջանը» անցել է Անտիոքում, ավելի հավանական է համարում ենթադրել, որ նա իր կրթությունը ստացել է Տարոնում, ս. Կարապետի հուշակվոր վանքում (Նույն տեղում, էջ 75):

4 Կորյուն, Գ, էջ 36—37, Ղազար Փարպեցի, Ա, Ժ: Հ. Աճառյանը նշում է, որ Մեսրոպը դիվանագիր էր Առավան անունով անձի հազարապետության ժամանակ («Հայոց գրեր», էջ 79—80): Հ. Մանանդյանը ենթադրում է, որ Կորյունի նախնական բնագրում մատնանշված է եղել, որ Մաշտոցը ծառայել էր Հայոց Խոսրով թագավորի արքունիքում Առավան հազարապետի ձեռքի տակ (տե՛ս Я. А. Манандян, Месроп Маштоц и борьба армянского народа за культурную самобытность. Ереван, 1941, стр. 12: Տե՛ս նաև նրա «Քննական տեսություն», հ. Բ, մ. Ա, էջ 250): Ա. Մուշեղյանն ապացուցում է, որ Առավան հազարապետը նույն ինքը Վահան Մամիկոնյանն էր՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանի եղբայրը: Հետազոտողը ենթադրում է, որ Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 356 կամ 357 թ. («Լրագիր հաս. գիտ.», 1983, № 7, էջ 75):

5 Կորյուն, էջ 39: Հ. Աճառյանը նշում է, որ Մեսրոպն արքունական դիվանագիրի պաշտոնումն էլ իր ուսումը շարունակեց այս կամ այն ձևով և, ինչպես Կորյունն է ցույց տալիս, նա սովորեց, «թե զինվորական արվեստը և թե կրոնական գիտությունները («Հայոց գրերը», էջ 80):

6 Խորենացի, Գ, խէ: Մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 89—90:

7 Խորենացի, Գ, խէ (աշխ. Թարգմ., էջ 285): Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 98—99:

նագրեր հորինել»⁸: Այս մասին Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը տեղեկացնում են Վոսաճապուհ թագավորին: Արել անունով մի քահանա թագավորին հայտնել էր, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ կան հայերեն նշանագրեր: Վոսաճապուհը Դանիելի մոտ է ուղարկում իր պալատականներից մեկին՝ Վահրիհին, որն ստանալով «դանիելյան» նշանագրերը, դրանք ուղարկում է Վաղարշապատ⁹:

Սահակը և Մաշտոցը թագավորի կարգադրությամբ մանուկներ հավաքեցին և մոտ երկու տարի նրանց սովորեցնում էին «դանիելյան» նշանագրերով¹⁰, բայց փորձը ցույց տվեց, որ այդ նշանագրերը պակասավոր են և չեն կարող ճշտությամբ արտահայտել հայերենի վանկերն ու հնչյունները: Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի առաջ նորից ողջ լրջությամբ ծառայած հայերեն նշանագրեր ստեղծելու խնդիրը:

Այս անգամ Վոսաճապուհ արքայի կարգադրությամբ Մաշտոցը մի քանի աշակերտներով մեկնում է ժամանակի կրթական կենտրոնները՝ Ամիդ, Սղեսիս¹¹, Նդեսիսյում Մեսրոպ Մաշտոցը հնարում է հայերեն լեզվի նշանագրերը: Այնտեղից նա իր օգնականների հետ գնում է Սամոսատ, որտեղ Հոռոփանոս հույն հմուտ գրչի աջակցությամբ վերջնականապես ձևավորվում և գծագրվում են նշանագրերը¹²: Մաշտոցը նորաստեղծ հարկական այբուբենի 36 տառերին անուններ է տալիս և դասավորում հունական այբուբենի օրինակով¹³: Իր աշակերտներ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ միասին Մաշտոցը ձեռնարկում է «Աստվածաշնչի» թարգմանությունը, սկսելով Սողոմոնի առակների գրքից: Հայերեն գրված առաջին բառերն էին՝ «ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»¹⁴: Այսպիսով, հայերեն գրերի ստեղծման մեծ ու տքնաջան աշխատանքն ավարտվում է 404/5 թվականին¹⁵:

8 Կորյուն, էջ 42:
9 Հաս Կորյունի, այդ տեղի է ունեցել Վոսաճապուհի հինգերորդ տարում, այնուհետև երկու տարի դրանցով ուսուցանել են մանուկներին, և նորից՝ նշված հինգերորդ տարում Մաշտոցը գնացել է Անտիոք (Կորյուն): Մարկվարտը ենթադրում է, որ «ամս երկու»-ն անհրաժեշտ է ուղղել, ժամիս երկու» (Մարկվարտ, Պատմութիւն հայերէն նշանագրերու, էջ 26, ծան. 1), իսկ, ըստ Հ. Աճառյանի, Կորյունի մոտ առաջին «հինգերորդը» անհրաժեշտ է ուղղել «երրորդ» (Հ. Աճառյան, «Երկու ուղղում Կորյունի մեջ», Տեղեկագիր Արմֆանի, 1941, 1 (6), էջ 169—170): Տե՛ս նաև Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 80—83:
10 Նույն տեղում: Հ. Աճառյանը դանիելյան տառերի մասին ենթադրություն է արել, որ դրանք «ուրիշ բան չէին, կթե ոչ ինչ-որ արամեական հնացած տառեր», որոնք թյուրիմացաբար ներկայացվել էին որպես հայերեն տառեր «արամեական և արամյան (հայ) բառերի շփոթությունից» (Հ. Աճառյան, «Երեք հարց Մեսրոպյան այբուբենի շուրջը», «Էջմիածին», 1946, օգոստոս-հոկտեմբեր, էջ 38—39):
11 Մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 115—127:
12 Կորյուն, էջ 48: Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 135: Մաշտոցը հանգիստում է նաև Քեղարթու Մոփսուստացուն՝ Նեստորիոսի ուսուցչին (տե՛ս Ն. Աղանց, «Անձանագր էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կենթից ըստ օտար աղբյուրների», «Հանգիստ ամսօրեայ», 1925, 5—12):
13 Նույն տեղում:
14 Նույն տեղում, Ը, էջ 50:
15 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 399: Ն. Աղանցը և Հ. Մանանդյանը եկել են այն եզրակացության, որ Մեսրոպ Մաշտոցի հայկական նշանագրերի գյուտը տեղի է ունեցել Վոսաճապուհի թագավորության հինգերորդ կամ վեցերորդ տարում, այն է՝ 392—393 թթ. (Ն. Աղանց, Մաշտոց և աշակերտը նորին, էջ 230, Հ. Մանանդյան, Քննական տեսություն... հ. Բ, մ. Ա, էջ 266): Ավելի ճիշտ կլիներ ասել, որ այս թվականներին սկսվել է Մաշտոցի գործունեությունը հայերեն գրերի ստեղծման բնագավառում, որն ավարտվել է 404/405 թթ.:

Հայ նորագյուտ նշանագրերով վերադարձող Մեսրոպ Մաշտոցին Երասխ գետի ափին մեծ շուքով դիմավորեցին Վառաշապուհ թագավորը, Սահակ Պարթևը և երկրի այլ մեծամեծներ, որտեղից հանդիսավորությամբ ուղևորվեցին գեպի Վաղարշապատ մայրաքաղաքը: Ժողովուրդն իր մեծ զավակին ընդունում է ցնծությամբ¹⁶:

2. ԳՊՐՈՑ: ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտներով սկսում է «թարգմանել և սովորեցնել»: Ամենից առաջ հարկավոր էր ուսուցիչներ պատրաստել, Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը Վաղարշապատում հիմնեցին առաջին վարդապետարանը՝ բարձրագույն դպրոցը: Պետք էր միաժամանակ և՛ թարգմանել, և՛ գրել, և՛ ուսուցանել: Այդ բարդ ու պատասխանատու գործն ամբողջությամբ ընկնում է Մաշտոցի ու նրա աշակերտների ուսերին: Բոլորին համակել էր հայրենասիրական այդ մեծ գործը: Հայերեն նշանագրեր ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցը, ինչպես ասում է Խորենացին, «բոլոր գավառներում դպրոցներ հիմնեց և պարսից բաժնի բոլոր կողմերը սովորեցրեց, բացի հունական մասից»¹⁷: Առաջին հերթին դպրոցներ հիմնվեցին երկրի կենտրոնում՝ Այրարատում¹⁸:

Գիտության և լուսավորության կենտրոն է դառնում մայրաքաղաք Վաղարշապատը: Այստեղ ուսուցիչներ էին պատրաստվում, որոնք այնուհետև ուղարկվում էին Հայաստանի տարբեր գավառները: Նրանցից մեկն էր նաև Մաշտոցի կենսագիր Կորյունը: Վաղարշապատում կրթություն են ստանում ոչ միայն հոգևորականները, այլև նախարարներն ու ազատները: Ինքը՝ Սահակ Ա-ն, հատուկ ուշադրություն է նվիրում իր Սահակդուխտ դստեր որդուն՝ հռչակավոր Վարդան Մամիկոնյանի կրթությանը¹⁹: Պատրաստվում էր մայրենի լեզվով կրթված երիտասարդների սերունդ, որն ավելի լավ էր գիտակցելու իր հայրենիքի ծանր վիճակը և պատրաստ էր լինելու կրծքով պաշտպանելու այն: Կաթողիկոսը ղեկավարում էր Այրարատի ռազմական տեսակետից կարևոր կետերում տեղավորված հայկական «կայանական զորքերի» ուսուցման գործը: Ինքը՝ Մաշտոցը, թողնելով Վաղարշապատը, հեռանում է երկրի առավել խուլ ու հտամնաց շրջանները՝ գրագիտություն տարածելու:

Այս ժամանակից սկսած հայ ժողովուրդը ձեռք է բերում մի հզոր զենք, որի օգնությամբ դարեր շարունակ պաշտպանում է իր ինքնուրույնությունն ու ազգային մշակույթը²⁰: Հայերեն գիրն ու դրա հիմքի վրա ստեղծվող գրականությունը նաև զորեղ միջոց են դառնում քրիստոնեական կրթության և գաղափարախոսությունը Հայաստանում ամրակայելու գործում: Մեսրոպն իր Տիրայր Խորձենացի և Մուշեղ Տարոնացի աշակերտների հետ վերստին ուղևորվում է Գողթան, բայց այս անգամ դպրոցներ ու մենաստաններ հիմնելու: Այստեղ նրան օգնության են գալիս տեղի իշխան Շաբաթը (Շամբեթ) և նրա որդի Գիտը

16 Կորյուն, էջ 55: 2. Անադյան, Հայոց գրերը, էջ 162—167:
17 Խորենացի, Գ, ծց (աշխ. թարգմ., էջ 294):
18 Առաջին վարդապետարանը բացվեց Վաղարշապատում՝ Հայրապետարանի մոտ (2. Անադյան, Հայոց գրերը, էջ 170), այս տարիներին պիտի դպրոցներ բացվեին Վաղարշապատի շուրջ գտնվող գյուղերում, առաջին հերթին Օշականում, ապա Փարպիում, Աշտարակում, Աղջբում, Բյուրականում և այլուր:
19 Նույն տեղում:
20 Պ. Ա. Մանանդյան, նշվ. աշխ.:

(Գյուտ)²¹: Գողթան գավառից հետո Մեսրոպ Մաշտոցն անցնում է հարևան Սյունյաց աշխարհը, որտեղ նույնպես դպրոցներ է բացում: Մինչև օրս պահպանվել է Գողթան գավառում Մեսրոպ Մաշտոցի լուսավորական գործունեության վայրերից մեկը՝ Մեսրոպավանը կամ Մարվանիսը, որն այսօր ևս ուխտատեղի է շրջակա գյուղերի հայ ազգաբնակչության համար:

Մեսրոպ Մաշտոցի այս գործունեությունն ընթանում էր քաղաքական նպաստավոր պայմաններում: Նոր գահ բարձրացած Թեոդոսիոս Բ կայսրն իր նախորդի՝ Արկադիոսի պես ձգտում էր շխախտել խաղաղության պայմանները Սասանյան Իրանում թագավորող Հազկերտ Ա-ի հետ:

Հաստատված խաղաղությունը օգտակար եղավ նաև հայկական գրերի և կրթության տարածման համար: Եռտող Մաշտոցը գործունեություն է ծավալում նաև Հայաստանի Բյուզանդիային ենթակա մասում²²: Եթե Հայաստանի Սասանյանների տիրապետությանն անցած մասում հայոց արքունիքը հովանավորում էր այդ մեծ նախաձեռնությունը, ապա բյուզանդական Հայաստանում թագավորական իշխանությունն արդեն գոյություն չուներ, իսկ կայսերական զորքերի հրամանատար Անտիոքոս ստրատեգը թեև սիրալիր ընդունեց Մաշտոցին, բայց թույլ չտվեց առանց Թեոդոսիոս Փոքր²³ կայսեր համաձայնության հայկական դպրոցներ հիմնել: Միայն Կոստանդնուպոլիս գնալուց և անձամբ կայսեր ու պատրիարք Ատտիկոսի (405—425) հետ տեսակցելուց հետո (420—422 թթ. միջև²⁴) Մաշտոցը բյուզանդական Հայաստանի դպրոցներում հայերեն ուսուցանելու պաշտոնական թույլտվություն ստացավ:

Ատտիկոս պատրիարքն իր նամակում հայտնում էր Սահակ Պարթևին, որ «մեր ինքնակալ Ավգուստոսի հրամանով քեզ իրավունք է տրվում ուսուցանել մեր կողմի (Հայաստանը), իսկ բորբորիտոնների աղանդը կամ հավանության բեր կամ հալածիր քո վիճակից»: Ապա տեղեկացնում էր, որ «Քո ուղարկած Մեսրոպին ձեռնադրեցինք եկեղեցիստիկոս»²⁵, այսինքն՝ անգամ ուղղափառ եկեղեցու:

Երբ Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտներով, երիտասարդ Վարդան Մամիկոնյանի հետ միասին Բյուզանդիա գնալիս, անցան բյուզանդական Հայաստանի Կարին և Դերջան գավառներով, տեղական բնակչությունը՝ հոգևորականները, իշխաններն ու «գավառացիները» մեծ հանդիսավորությամբ դիմավորեցին նրան: Թեոդոսիոս Բ կայսրը հրամայեց, որ Մեսրոպ Մաշտոցին մեծարեն ըստ արժանվույն և նրան շնորհեց «ակումիտ» (ακουμιτης, որը նշանակում է «տքնող, հսկող»), իսկ Սահակ Պարթևի թոռանը՝ Վարդան Մամիկոնյանին «ստրատեղատ» կոչումները²⁶: Իր աշակերտների աջակցությամբ Մաշտոցը «Հայոց կես ազգի համար, որ հոռոմների թագավորի իշխանության սակ էր», հայկական դպրոցներ է հիմնում²⁷:

21 2. Անադյան, Հայոց գրերը, էջ 174:
22 Մանրամասն տե՛ս 2. Անադյան, Հայոց գրերը, էջ 196—219:
23 Կայսրը, ըստ Խորենացու, զձգո՛հ էր Սահակ կաթողիկոսից, որ նա, արժամարհելով հույն գիտնականներին, «ինչ-որ ասորիների մոտ էր որոնել իմաստության գյուտը» (Գ, ծց, տե՛ս նաև՝ 2. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 273—274):
24 2. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 275:
25 Խորենացի, Գ, ծց (աշխ. թարգմ., էջ 300):
26 Կորյուն, էջ 64:
27 Նույն տեղում:

վերադառնալով Հայաստան հոռոմեական մասից, Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների մի մասի հետ կրկին գնաց Գողթան գավառը և այս անգամ ևս նրան օգնեց Շաբաթի (Շամբիթի) որդի Գյուտը, որն այն ժամանակ Գողթան գավառի իշխանն էր²⁸։ Այնուհետև Մեսրոպ Մաշտոցը վերադառնում է Վաղարշապատ²⁹։

Հայ գրերի գյուտից հետո եկեղեցական գրքերի հետ մեկտեղ թարգմանվում են անտիկ աշխարհի հեղինակների լավագույն երկերը։ Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը չէին կարող շմասնակցել «տիեզերական եկեղեցին» քննադատողների՝ «հերետիկոսների» դեմ ուղղված պայքարին, որն սկսել էր Բյուզանդական կայսրությունը։ Կոստանդնուպոլսից վերադարձող թարգմանիչները հայրենիքում «գտան Մեծն Սահակին ու Մեսրոպին Տարոնի Աշտիշատում, հանձնեցին թղթերը և Եփեսոսի ժողովի (431 թ.) կանոնները, սահմանված վեց կանոն, այլև Ս. Գրքի ստույգ օրինակները³⁰։ Այնուհետև «Մեծ Սահակը և Մեսրոպն ընդունելով (Բիբլիայի օրինակը), նորից թարգմանեցին մի անգամ շտապովի թարգմանվածը, նրանց հետ միասին նորից հորինելով ու նորոգելով»³¹։

Հայերեն գիրն ու գրականությունն ստեղծելուց հետո այս շարժման մեջ են քննադրվում եղբայրակից վրացիներն ու աղվանները, որոնք նույնպես հոգ տարան իրենց նշանագրերն ունենալու։ Ինչպես հաղորդում է Կորյունը, Մեսրոպ Մաշտոցը սկսեց «նշանագրեր հորինել վրաց լեզվի համար։ Գրեց, կարգավորեց և, ինչպես հայտնի է, հարդարեց ու, իր լավագույն աշակերտներից մի քանիսին հետը վերցնելով՝ ներկայացավ թագավորին, որի անունն էր Բակուր³², և երկրի եպիսկոպոսին, որի անունը Մովսես էր... Եվ նա իր արվեստն առաջադրելով՝ խրատեց, հորդորեց նրանց, և ապա բոլորն՝ հանձն առան նրա խնդրածը կատարել։ Եվ գտնվեց վրացերեն լեզվի թարգման մի մարդ, որն անվանվում էր Ջաղա և որը գրագետ ու ճշմարտահավատ մարդ էր։ Այնուհետև վրաց արքան հրամայեց իր իշխանության զանազան կողմերից և խառնիճաղանջ գավառներից հավաքել տղաներ և հանձնել վարդապետներին»³³։ Կորյունը ցույց է տալիս, թե ինչ նշանակություն ունեցավ վրաց ժողովրդի համար վրացերեն գրերի հորինումը. «նրանց, որ այնքան առանձին և բաժանված լեզուներից ժողովվեցին, մեկ աստվածային պատգամներով կապեց, դարձրեց մեկ ազգ, մեկ Աստուծո փառաբանիչներ»³⁴։ Մաշտոցը նման առաքելությանը մեկնում է նաև Աղվանք։ Կորյունը գրում է. «Այդ ժամանակ եկավ, հանդիպեց նրան մի քահանա մարդ, ազգով աղվան, որի անունը Բենիամին էր։ Եվ նա (Մաշտոցը) հարցուփորձ արեց և քննեց աղվաններն լեզվի բարբարոս բառերը, ապա վերնապարզեց կորովի իր սովորությանը նշանագրեր հորինեց և Քրիստոսի տված շնորհքի ներգործությամբ կշռադատեց, կարգավորեց և հաստատեց... Եվ Մաշտոցը գնաց իջավ նրանց աշխարհը և, հասնելով թագավորական տեղերը, տե-

28 Խառնեացի, Գ, 4:

29 Կորյուն, էջ 65:

30 Խառնեացի, Գ, կա (աշխ. թարգ., էջ 339):

31 Նույն տեղում:

32 Բակուրը (416—429) Պետրոս Իբերի հայրն էր, տե՛ս «Житие Петра Ивера», изд. Н. Марра. Православный Палестинский сборник, 47 вып. СПб., 1896, էջ 82—83, տե՛ս 2. Մանեգյան, նշվ. աշխ., էջ 271:

33 Կորյուն, էջ 62—63: Հմմտ. Խառնեացի, Գ, 89:

34 Կորյուն, էջ 65: 2. Անապայեղ նշում է, որ Մեսրոպ Մաշտոցը վրաց գրերը հորինել է 408 թ. («Հայոց գրերը», էջ 170—182, 339, 387):

սավ աղվանների սուրբ եպիսկոպոսին, որի անունը Երեմիա էին ասում, և նրանց թագավորին, որի անունն Արսվաղ էր, որոնք բոլոր ազատանիների հետ միասին մեծ խնդությունք ընդունեցին նրան Քրիստոսի անվան համար։ Ապա երբ նրանք հարցրին՝ նա բացատրեց, թե ինչի համար է եկել։ Եվ նրանք, երկուսը միասին, եպիսկոպոսը և թագավորը, հանձն առան ընդունել դպրութունը։ Նրանք հրաման տվեցին նաև, որ իրենց իշխանության գավառներից ու տեղերից դպրության արվեստի համար բազմաթիվ տղաներ բերեն և հավաքեն, հարմարավետ ու պատեհ տեղերում մաս-մաս տեղավորեն դպրոցներում և նրանց ապրուստի համար կարգեն թոշակներ»³⁵։

Հայաստանում Վոամշապուհի օրոք սկսված և այնուհետև ծավալված լուսավորական լայն շարժումը, որն իրականացվում էր Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Ա կաթողիկոսի գլխավորությամբ, պսակվում է նրանով, որ հայ ժողովուրդը վերջնականապես ստեղծում է իր ինքնուրույն մշակութային աշխարհը։ Սասանյան Իրանի տիրող վերնախավը բավական ուշ հասկացավ, որ հայերի, վրացիների և աղվանների այս մեծ շարժումը, ճիշտ է, նպաստում էր նրանց հեռացմանը դավանակից Բյուզանդիայից, բայց առաջին հերթին սատարում էր այդ ժողովուրդների ինքնագիտակցության զարգացմանն ու հակապարսկական տրամադրությունների ուժեղացմանը³⁶։

Հազկերտ Բ-ի (439—457) գահ բարձրանալուն պես սկսվեց Սասանյանների համաձուլարար քաղաքականությունը, որի առաջին քայլն էր լինելու ուշնաջնել հայերի, վրացիների և աղվանների ինքնուրույնությունը։ Սակայն այդ քաղաքականությունը դատապարտված էր ձախողման։

Մեսրոպ Մաշտոցը սուսկ տառերի գյուտարար չի եղել. նա նաև հիմնագիրն է հայ դպրոցի գրականության՝ արձակի և շափածոյի ու հայկական երաժշտության։ Մեզ հասած նրա բանաստեղծական քերթվածքներում դրսևորվում է մեծ քաղաքացին և մտածողը։ Նրան ամենից առաջ հետաքրքրում էր իր ժողովուրդը, իր հայրենիքը։ Մեսրոպ Մաշտոցի կյանքի և գործունեության գերագույն խորհուրդը իր ժողովրդին ծառայելն էր մեծագույն նվիրումով, նրան յուսավորելը, նրա ինքնության պահպանելը։ Տարիների տքնանքով հորինելով, մշակելով ու կիրառելով հայոց այբուբենը, զարգացնելով հոգևոր առաջընթացի, ազգային մշակույթի ստեղծման ու պահպանման անփոխարինելի գեներ՝ մեր հուրհրատող մայրենի լեզուն, Մեսրոպ Մաշտոցը իրական հնարավորություն քնննեց հայ ժողովրդին՝ մշակույթի համաշխարհային գանձարանը մուծել իր հանձարի գոհարները։

35 Նույն տեղում, էջ 68—70: Խորհնացին խոսելով այս նույն անցքերի մասին, ավելացնում է, որ Մեսրոպը Բենիամին թարգմանիչի և Սյունիքի Անանիա եպիսկոպոսի «օգնությամբ ստեղծեց նշանագրեր՝ զարգարացիների կոնորդային, կոպիտ, խժական, բեկբեկուն լեզվի համար» (Գ, 89, աշխ. թարգմ., էջ 294): Գարգարացիների հիշատակությունը վկայում է այն մասին, որ Աղվանքում մի ժամանակ գրանց զբաղեցրած տարածքում գերիշխող բնակչությունը ներկայացված է եղել վախճանյան (չեչենոհնդուշական) ցեղին պատկանող զարգարացիներով, որոնց խափածքը դարձավ աղվանից գրական լեզվի հիմքը (տե՛ս С. Т. Еремьян, Идеология и культура Албании III—VII вв.: «Очерки истории СССР, III—IX вв.», М., 1958, стр. 327):

36 Ս. Տ. Մեմյան, Մեսրոպ Մաշտոց (ժննդյան 1600-ամյակի առթիվ) «Լեհիստան սպիտակ», 1962, 5, էջ 16:

3. ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ: ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայոց լեզուն աշխարհի հնագույն լեզուներից է: Անցած լինելով զարգացման երկար ու ձիգ ուղի՝ այն աչքի է ընկնում ճոխություններ ու մշակվածություններ: Վիթխարի է նրա դերը հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում, գոյության բոլոր ժամանակներում:

Իր հույժ հարուստ պատմությամբ, կառուցվածքային բնորոշ ու ինքնատիպ իրողություններով հայոց լեզուն մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև գիտության համար, որպես գիտական հետազոտությունների անգնահատելի ու անսպառ աղբյուր:

Պատմահամեմատական ուսումնասիրություններով պարզված է, որ հայերենը ծագումով պատկանում է հնդեվրոպական ընտանիքի լեզուների շարքին: Երբ սկզբնավորվեց պատմահամեմատական լեզվաբանությունը, և հայերենը ևս ընդգրկվեց դրա ուսումնասիրման ոլորտը, գիտնականներից ոմանք կարծում էին, թե դա հնդեվրոպական լեզուների մեջ մտնում է որպես իրանյան ճյուղի լեզու: Այդ վարկածը բխում էր հայերենում գոյություն ունեցող իրանյան փոխառությունների առատությունից: Դեռ պարզ չէր այդ փոխառությունների բնույթը, և դրանք դիտվում էին որպես ծագումնային բուն տարրեր: Հայերենի ազգակցական բնույթի ճիշտ որոշման խնդրում մեծ դեր խաղացին ականավոր գիտնական Հյուբշմանի աշխատությունները: 1875 թ. հրատարակած «Հնդեվրոպական լեզուների շրջանում հայերենի գրաված դիրքի մասին» մեծարժեք հոդվածում Հյուբշմանն անհերքելի փաստերով ապացուցեց, որ իրանյան տարրերը հայերենում առկա են իբրև փոխառություններ, և հնդեվրոպական ընտանիքում հայերենն ուրույն ճյուղ է ու միջին դիրք է գրավում բալթիասլավոնական և իրանյան ճյուղերի միջև: Մի շարք գիտնականների (Ա. Մեյն, Հ. Աճառյան և ուրիշներ) հետագա հետազոտություններն առավել ևս հիմնավորեցին այդ տեսակետը:

Նույնիսկ այն գիտնականները, որոնք գտնում են, թե հայերենը խաչավորված ու խառնածին լեզու է, շեշտում են, որ այն ունի ուժեղ շափով շեշտված հնդեվրոպական նկարագիր³⁷:

Հայոց լեզու հասկացությունը լայն է թե՛ պատմական, թե՛ կացութային (ստատիկ) առումով: Պատմականորեն տարբերվում են դրա հին, միջին և նոր, կամ աշխարհաբարյան շրջանները (աշխարհաբարը՝ արևելյան և արևմտյան ճյուղերով, սրանք էլ իրենց հերթին ներկայանում են տարբեր փուլերով): Հայերենի զարգացման այդ երեք շրջաններից գիտությունը հայտնի են 60-ից ավելի բարբառներ, որոնք, անշուշտ, բոլորը չեն:

Հայոց լեզվի պատմության հին շրջանն ընդգրկում է հին հայերենը, որի գրավոր արտահայտությունը հետագայում կոչվում է նաև զբարբառ: Հին հայերենը ծառայել է իբրև ընդհանուր հաղորդակցման միջոց հայ ժողովրդի համար նրա ձևավորման ժամանակներում և հետագա դարերում: Սակայն, որպես լեզվական նյութ, այն գալիս է ավելի հեռավոր ժամանակներից՝ մինչև էթնիկական լեզվի աստիճանին բարձրանալը անցնելով տոհմային ու ցեղային շրջաններով: Դրա հիմքում ընկած է հայասարմենական ցեղային միության լեզուն: Լեզվի կառուցվածքային իրողությունների քննությունը ցույց է տալիս,

37 Տե՛ս Գ. Ա. Ափաեցյան, Հայոց լեզվի պատմություն, հին շրջան, Երևան, 1961, էջ 11:

որ բազմաթիվ օրինքեր ձևավորվել ու գործել են շատ հին ժամանակներում, և դրանց մի զգալի մասը հետագայում իր տեղը զիջել է հաստատվող այլ օրենքների: Կտրելով երկար ուղի՝ լեզուն աստիճանաբար զարգացել է, յուրացվել հայ ժողովրդի կազմի մեջ մտնող այլ ցեղերի կողմից, ընդլայնել իր ֆունկցիաները և պետականության հիմնադրման շրջանում հսկայական դեր է կատարել ժողովրդի ու երկրի միասնականացման գործում: Խիստ ուշագրավ է Ստրաբոնի վկայությունը Արտաշեսի ու Զարեհի կողմից երկրի սահմանների ընդլայնման ու լեզվի տարածման մասին, թե ինչպես այդ սահմաններում, բոլորը միալեզու եղան»³⁸: Այդ էլ հենց վաղուց արդեն ձևավորված հայ էթնիկական լեզվի տարածումն էր:

Հայ էթնիկ լեզուն ձևավորման ընթացքում զարգացել է հիմնականում իր իսկ ներքին օրինաչափությունների ծավալումով, ապա նաև ժողովրդի կազմում ընդգրկվող այլևայլ ցեղերի լեզուների բառամթերքի որոշ մասի, թերևս և այլ տարրերի օգտագործմամբ: Այնուհետև, որպես ձևավորված լեզու այն կրել է նաև շատ լեզուների ազդեցությունը, որը դրսևորվում է փոխառությունների ձևով: Հայերենն իր հերթին, ազդել է այլ լեզուների վրա:

Հին հայերենի մասին մենք այժմ պատկերացում ենք կազմում ըստ վաղ միջնադարյան հարուստ մատենագրության: Բայց ի՞նչ էր դրա նախադրային վիճակը: Այս հարցն առավել շափով վերաբերում է հեռավոր ժամանակների, քանի որ գրային շրջանին անմիջապես նախորդող ժամանակաշրջանի տարբերությունները շատ մեծ չէին կարող լինել: Այս խնդրում խիստ կարևոր է և շոշափելի արդյունք է տալիս պատմահամեմատական մեթոդի կիրառումը: Սակայն հիշյալ մեթոդով եթե հնարավոր է պարզել կառուցվածքային շատ իրողություններ, ապա չափազանց դժվար է բացահայտել լեզվի ավելի կատարյալ պատկերը:

Այս բացը որոշ շափով լրացվում է ժողովրդական բանահյուսության՝ մեզ հասած բեկորների լեզվի ուսումնասիրությամբ: Հենց դրանք էլ ներկայացնում են մեր լեզվի պատմության նախադրային շրջանի մի մասը, որ անվանվում է վիպասանական հայերեն³⁹: Այդ թանկագին զանձերի համար պարտական ենք Մովսես Խորենացուն, որը գրի է առել ու պահպանել 12 հատված (մեկական հատված էլ պահպանել են Ագաթանգեղոսը և Գր. Մագիստրոսը): Պատմահայր Մովսես Խորենացին, Գողթան երգիչների երգած երգերը գրի է առել նույնությամբ, իսկ դա, առանձնապես կարևոր է լեզվի ուսումնասիրության առումով: Ինչպես երևում է բովանդակությունից, այդ երգերը հյուսված են մեր թվականությունից առաջ: Մինչև գրի առնվելը դրանք անցել են դարերի միջով և, անշուշտ, լեզվական առումով ևս որոշ փոփոխությունների են ենթարկվում, բայց ամենևին էլ չեն կորցրել իրենց հիմնական ժողովրդական էությունը, լեզվական բնորոշ հատկանիշները: Համեմատությունը ցույց է տալիս, որ վիպասանական հայերենը կառուցվածքային հիմնական տարրերով ընդհանուր է հին հայերենի հետ և կրում է շեշտված ժողովրդական կնիք: Քերականական կառուցվածքը կանոնավոր է, թեև կան փոքրիկ շեղումներ: Լեզվին մի առանձին երանգ են հաղորդում ժողովրդական ոճային հնարները, ինչպիսիք են բառերի

38 Հմմտ. Հ. Ա. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., Երևան, 1944, էջ 116:

39 Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 65—76:

փաղաքշական-նվազական կազմություններն ու երանգավորումները՝ կարմրիկ-եղեգեթիկ, աշխուճ, հաճախ էլ համապատասխան ածանցումը հանդիպում է կրկնակի ձևով, որն առավել ընդգծում է փաղաքշական երանգը, ինչպես՝ կրկնակի ձևով, տղեկիկ: Խոսքն արտահայտիչ ու տպավորիչ են դարձնում կրկնությունները, ինչպես՝ «Մեկն էր երկին, երկն էր երկիր, երկն էր և ծովն ծիրանի... ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան փող բոց ելանէր...», «Տեղ ոսկի տեղայր... տեղայր մարգարիտ...» և այլն: Ազատ ու ճկուն է նախադասության անդամների շարադասությունը: Այս հատկանիշները դարեր շարունակ պահպանվել են հայ ժողովրդական խոսքի մեջ և ավելի ծավալվել միջին հայերենում ու շատ բարբառներում: Հետաքրքրական պատկեր ունի բառապաշարը: Ինչպես ցույց է տվել Հ. Աճառյանը, այնտեղ կան և բուն հնդեվրոպական, և փոխառյալ, և ծագումով անհայտ բառեր, այդ տարբեր շերտերի մեջ առանձին վերցված գերակշռող են հնդեվրոպական բնիկ բառերը (եղած բոլոր բառերի 45 տոկոսը)⁴⁰: Ժողովրդական բանահյուսության այս հատվածների լեզուն շատ բան է ասում հին հայերենի՝ երբեմնի կենդանի, խոսակցական լեզու լինելու իրողության մասին:

Հայոց լեզվի համար էական նշանակություն ունեցան գրերի գյուտը և դպրության սկզբնավորումը: Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի գլխավորած հզոր գրական շարժումը մեծ դեր խաղաց հայերենի զարգացման գործում: Այսպիսով, դրա մշակումն սկսում է ծավալվել նաև գրավոր ճանապարհով, ընդլայնվում են դրա ֆունկցիաները, հաղորդակցման անմիջական բանավոր միջոց լինելու հետ նա սկսում է ծառայել նաև գրավոր խոսքի արտահայտմանը. դառնում է գրավոր լեզու, արձանագրվում նախ թարգմանական և ապա ինքնուրույն գրքերում ու իրրև լեզվական ամբողջական համակարգ ավանդվում հետագա սերունդներին:

Հասկանալի է, որ գրավոր լեզուն չէր կարող ստեղծվել միանգամից, առանձին անհատների ջանքերով, չէր կարող ունենալ արհեստական բնույթ: Այն ձևավորվել է ժամանակի ընթացքում հայ էթնիկական լեզվի «բնական» նյութից: Մեր առաջին թարգմանիչներն ու մատենագիրներն իրենց մեծ գործը կատարել են ժողովրդի համար իրրև հաղորդակցման միջոց ծառայող կենդանի լեզվով, որը հենված էր երկրի վարչաքաղաքական կենտրոնի (Արարատյան նահանգ) խոսվածքների վրա: Առանց կենդանի լեզվի անհնարին կլիներ դրությունների սկզբնավորումը: Մյուս կողմից գրի ու գրականության տարածումն ապարդյուն կլիներ, եթե գրավոր լեզուն չլիներ այս կամ այն չափով ընդհանուր ու հասկանալի հայ ժողովրդի համար:

Մեզ հասած առաջին իսկ գրավոր հուշարձաններն աչքի են ընկնում լեզվի հարստությամբ ու կանոնավորությամբ: Այդ բացատրվում է նրանով, որ մինչև գրական ստեղծանի բարձրանալը լեզուն դարերի ընթացքում ժողովրդի բերանում ենթարկվել էր տեղական մշակման և, բացի դրանից, դրա կատարելագործմանը մեծապես նպաստել են նաև բանավոր թարգմանությունները, որոնք հատկապես 4-րդ դարի ընթացքում քրիստոնեության տարածման համար կատարվում էին մինչև հայ դպրության սկզբնավորումը:

Հայ հին գրավոր լեզուն, իր հերթին, երկար ճանապարհ է անցել և տարբեր ժամանակներում ու ամեն տեսակի դրսևորումներում առաջիորեն նույն

40 Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմությունը, II մաս, Երևան, 1951, էջ 76:

վիճակը չունի: Գործածվելով մատենագրության մեջ ու մշակվելով այդ ճանապարհով, անցնելով զանազան ուղղությունների բովով, ինչպես նաև որոշ չափով արտացոլելով բանավոր լեզվում տեղի ունեցած փոփոխությունները՝ այն իր ներսում բաժանվում է տարբեր փուլերի և ուղղությունների: Հայագիտությունն ընդհանուր գծերով նախ այն բաժանում է մեսրոպյան և ետմեսրոպյան փուլերի: Ժամանակագրական առումով սահմանագիծն ընդունվում է 460 թվականը:

Մեսրոպյան հայերենի այլ անվանումն է՝ «ոսկեդարյան հայերեն»⁴¹:

Մեսրոպյան հայերենով մեզ հասել է 41 գործ, որոնք գերազանցապես թարգմանական են և մասամբ՝ ինքնուրույն: Դրանք վերաբերում են 50—60 տարվա ժամանակամիջոցի և լեզվի հիմնական կողմերով ընդհանուր են, նաև կայն ոճական տեսակետից ունեն տարբերություններ, որոնց հիման վրա էլ հետագայում գիտնականների կողմից բաժանվել են 4 ուղղությունների կամ դասերի⁴²: Դրանք են՝ ա) Եզնիկյան, բ) Եփրեմյան, գ) Կյուրեղյան, դ) Ագաթանգեղյան: Երկրորդ և երրորդ դասերի գործերն ամբողջովին թարգմանական են, առաջին դասի մեջ ինքնուրույն է Եզնիկի աշխատության բնագիրը, չորրորդ դասի մեջ՝ Ագաթանգեղոսի, Կորյունի և Փավստոսի երկերի բնագրերը: Այս դասերը ոճաբանորեն բնորոշվում են այսպես. «Եզնիկյանը բոլորից կանոնավորը, ճիշտը, հստակը, արվեստավորն ու գեղեցիկն է. Եփրեմյանը ամենից պարզն ու հասարակը, Կյուրեղյանը ներկայացնում է բարեխառն ոճ և բռնում է երկուսի միջին տեղը. Ագաթանգեղյանը պերճ, բազմազարդ, մթին ու հաճախ անկանոն»⁴³:

Մեսրոպյան հայերենի տարբերությունները ետմեսրոպյանի համեմատությամբ գերազանցապես արտահայտվում են բառերի ու դարձվածքների գործածության, բառակազմության միջոցների գործադրման և մասամբ էլ քերականական ձևերի կիրառության մեջ⁴⁴:

Նման տարբերությունները, սակայն, խոր անջրպետ չէին ստեղծում ու խզում չէին առաջացնում ամբողջ հին գրավոր լեզվի մեջ: Եվ բնական է, որ մեսրոպյան հայերենը դիտվում է որպես հին գրավոր լեզվի ամենաբնորոշ դրսևորումներից մեկը. չէ՞ որ հենց դրանով է սկսվում գրավոր լեզուն:

Հայ հին մատենագրությունը գնալով դառնում է բազմաժանր, ընդլայն-

41 Հայոց լեզվի գիտական ճանաչումը և այսպիսի շրջաբաժանումը պատկանում է Վիեննայի Մխիթարյան միաբանության հայագետներին: Նախ այն հայտնի դարձավ Գաթրոնյանի և Գարագաշյանի ջանքերով, անցյալ դարի քառասնական թվականներին: Նրա մասին գրվեցին շատ ուսումնասիրություններ, որոնցով վեր հանվեցին հայ գրավոր լեզվի պատմության շրջալի այդ օղակի առանձնահատկությունները: Մեր ժամանակներում այդ բոլորի ամփոփումը տվել են Ն. Ակիբյանը և Հ. Աճառյանը: Տե՛ս Ն. Ակիբյան, Գասական հայերենը և վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 76—93:

42 Հմմտ. Նուրյը Բիլաքեղացի, Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնը, Տփղիս, 1900, էջ 16—35; Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 77—84:

43 Հ. Աճառյան, նույն տեղում, էջ 78:

44 Մեսրոպյան հայերենում չեն գործածվել հետագայում շատ տարածված որոշ բառեր (արփի, սաղարթ, սեռ, փարթամ, փեթակ, քանակ և այլն), շատ նախածանցներ ընդհանրապես չեն եղել որպես այդպիսիք (բազ, բաց-, գեր-, գեր-, ենթ և այլն)—ունի վերջածանցով անուններ չեն կազմվել, ան—ծիսական ածանցն ունեցող բառերը չէին ընդունում—նյի վերջածանցը, ի լծորդության բայերը անորոշ գերբայի մեջ չէին ցուցաբերում իրենց համադասարանի խոնարհիչը և այլն:

վում է թեմատիկ ընդգրկումը, սկզբնավորվում, ձևավորվում կամ տարբերակվում են գիտության տարբեր բնագավառներ, և այս բոլորի հետևանքով լեզվի մեջ առաջանում են զգալի փոփոխություններ:

Ետմեարդյան գրական հայերենի փոփոխությունները երևան են գալիս տարբեր ուղղություններով, այն է՝ լեզվի ներքին օրենքների ժալալումով ու դրանց արտացոլումով գրական նպատակադրված միջամտությամբ և նոր ազդեցություններով: Ընդլայնվում են դրա բառակազմական հնարավորությունները, հարստանում բառապաշարը, ստեղծվում են նոր տերմիններ, տեղի են ունենում իմաստային փոփոխություններ, քերականական օրենքների որոշ տեղաշարժեր և այլն: Ետմեարդյան լեզվական որոշ ազդեցությունները:

Գրական նպատակադրված միջամտության խնդրում շատ բնորոշ է հունարան դպրոցի դերը: Ետմեարդյան շրջանում հունարենից փոխառված բառերի և այլ կարգի գիտական գործեր թարգմանելիս թարգմանիչ գիտնականները հունարենի օրենքների օգտագործումով ու պատճենումով ստեղծում էին բառակազմական ու քերականական ձևեր և այդպիսով նոր տեսք տալիս գրավոր խոսքին: Գրավոր լեզվի մեջ այդ ուղղությունն այնքան որոշակի էր, որ ճանաչվել է հունարան հայերեն անվանումով⁴⁵: Հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից հունարեն լեզվի քերականական կառուցվածքին հատուկ որոշ կարգեր (կատեգորիաներ) մեխանիկորեն փոխադրվեցին հայերենի մեջ (սեռն առանձին խոսքի մասերում, երկակի թիվը և այլն): Առանձնապես մեծ տարբերություններ առաջ եկան բայերի խոնարհման մեջ: Դրանք օտար էին հայերենի ոգուն և երբեք չէին կարող մերվել նրա քերականական կառուցվածքին, քանի որ էպես չէին բխում հայ ժողովրդի լեզվամտածողական իրական վիճակից: Այս ուղղությամբ հունարան դպրոցի գործադրած ջանքերը միանգամայն ապարդյուն էին և մեր լեզվի հաջորդ շրջաններում դրանից հետք անգամ չմնաց:

Սակայն սխալ կլիներ պնդել, թե հունարան դպրոցը հայոց լեզվի մեջ գրական դեր չունեցավ: Քերականական նորամուծությունները համարժեք չէին բառակազմական նորամուծություններին: Բառակազմության հարցերում արժեքավոր գործ կատարվեց. ստեղծվեցին բազմաթիվ նոր բառեր ու գիտական շատ տերմիններ, որոնք ժամանակի պահանջները բավարարելուց բացի, զգալի մասով գործածվում են և այսօր (ենթակա, մակբայ, տրամաբանություն, տրամագիծ, քերականություն և այլն). այժմ դրանց նմանակություններ կազմվում են ուրիշները: Հունարան դպրոցի ներկայացուցիչները, հունարենի օրինակով, բայց հիմնականում հայկական լեզվական նյութով, ստեղծեցին մի շարք նախածանցներ, որոնց կարիքը որոշակիորեն զգում էր հայոց լեզուն, որը հա-

45 Հունարան դպրոցի և հունարան հայերենի մասին տե՛ս Յ. Մանանդյան, Յունարան գրությունը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928: Լ. Ահառյան, Հայոց լեզվի պատմություն, 11 մաս, էջ 142—168: Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954: Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971: С. С. Арс-шатаян, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 1973.

րուստ լինելով վերջածանցներով, ընդհակառակն, աղբատ էր նախածանցներով: Հունարան հայերենում երևան եկած նախածանցների մեծ մասը մեր արդի լեզվում գործուն է և կարևոր դեր է կատարում նոր բառեր կազմելու գործում (ինչպես արտ,—գեր, ենթ—, ներ—, ստոր—, վեր—, փոխ— և այլն): Պետք է նշել նաև շատ բառերի վերաիմաստավորումը և գիտական հասկացությունների արտահայտման համար դրանց հատուկ օգտագործումը:

Որոշակիորեն նկատելի է, որ լեզվի գրավոր և բանավոր դրսևորումները զարգացման տարբեր ընթացք են ունեցել: Սակայն այդ չի նշանակում, թե դրանք լիովին անջրպետված են եղել: Հասկանալի է, դպրության սկզբնավորման շրջանում լեզվի բանավոր և գրավոր արտահայտությունների միջև շատ շոշափելի տարբերություններ չէին կարող լինել, իսկ եղածները մեծ մասամբ պիտի լինեին ոճական, խոսքի բովանդակությունից բխող ձևակերպումների, բառագործածության ու նման այլ կողմերով: Սա վերաբերում է ընդհանուր լեզվին և ոչ տեղական բարբառներին: Գրավոր լեզուն կիրառվում էր մատենագրության մեջ և ուսուցվում դպրոցներում: Նրա օրենքների ամբողջական համակարգի ամրապնդումը հետզհետե ավանդականության ուժ էր ստանում և մատենագիրները սերնդեսերունդ, գերազանցապես հենվում էին V դարի մատենագրության լեզվի վրա: Պարզ է, որ այդպիսի պայմաններում գրավոր լեզվի զարգացումն զգալիորեն կաշկանդվում էր: Եվ այդ է պատճառը, որ ավելի ուշ ժամանակներում ստեղծված գրավոր հուշարձանների մեջ կան այնպիսիները, որոնց լեզուն մեծ չափով հիշեցնում է V դարի մատենագիրների երկերի լեզուն:

Բանավոր լեզուն ժողովրդի բերանում դարեդար ենթարկվում է փոփոխությունների ու իր որակով աստիճանաբար սկսում է տարբերվել գրավոր լեզվից: Տարբերությունները հետզհետե մեծանում ու խորանում են, և գալիս է մի ժամանակաշրջան, երբ հին հայերենի գրավոր ու բանավոր դրսևորումները գիտակցվում են իբրև լեզվական տարբեր որակներ: Գրավորը դիտվում է գրոց լեզու, գրաբար, բանավորը՝ աշխարհիկ լեզու, աշխարհաբար: IX—X դդ. արդեն մեր մատենագրության մեջ ուղղակիորեն այդպիսի տարբերակող գնահատում է տրվում դրանց: Բնորոշ են Համամ Արևելցու, իսկ այնուհետև Հովհ. Դրասխանակերտցու հիշատակումները ժողովրդական խոսակցական լեզվի մասին՝ ի տարբերություն գրաբարի:

Դեպի ժողովրդական կենդանի լեզուն հակված առանձին մատենագիրներ ազատ վարվելով դուրս էին գալիս գրավոր լեզվի շրջանակներից և տեղի տալիս իրենց դարաշրջանին հատուկ լեզվական իրողություններին: Եվ, այդպիսով, այսօր մենք որոշ գաղափար ենք կազմում ժամանակի խոսակցական լեզվի ու դրա փոփոխությունների մասին: Այս տեսակետից խիստ բնորոշ է VII դարի մատենագիր Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկի լեզուն: Իհարկե, հիշյալ երկը գրված է գրաբար անվանվող լեզվով, սակայն այնտեղ դյուրությամբ կարելի է նկատել ժամանակի խոսակցական լեզվի բազում բնորոշ կողմեր, լեզվի որակական փոփոխությունը ներկայացնող շատ երևույթներ, ժողովրդական լեզվամտածողության ոգի:

Սակայն նույնը չի կարելի ասել, թեկուզ, նույն դարաշրջանում ապրած մեծահռչակ մաթեմատիկոս Անանիա Շիրակացու երկերի կամ հաջորդ դարի պատմիչ Ղևոնդի աշխատության լեզվի մասին: Սրանք, մասնակի տարբերություններով հանդերձ, ավելի խստությամբ են պահպանում գրավոր լեզվի կանոնները և չունեն Լ. Մամիկոնյանի երկի լեզվի ընդգծված բնականությունը:

VII—VIII դդ. վերաբերող լեզվական այս տարբերությունն ավելի է խորանում հետագա դարերում:

Հունարան դպրոցի հետ սերտորեն կապված են հայ քերականագիտության սկզբնավորումը և հայոց լեզվի գիտական ուսումնասիրության փորձերը: Սակայն այդ բնավ չի նշանակում, թե հայ մտավորականությունը մինչ այդ չի հետաքրքրվել դրանով: Հայ գրերի գյուտը և դպրության սկզբնավորումը շատ բան են ասում այդ մասին: Գրերի ստեղծումը մասնագիտական առումով հաջողությամբ կարող էր իրագործվել, մի կողմից՝ այլ լեզուների գոյություն ունեցող այլուբնեների բնույթի, հորինվածքային սկզբունքների իմացությամբ ու հաշվառումով և, մյուս կողմից՝ հայոց լեզվի հնչյունական համակարգի խորազնին ուսումնասիրությամբ ու քաջ պատկերացումով: Գրերի գյուտը ցույց է տալիս, որ նրա հանձարեղ հեղինակը՝ Մեսրոպ Մաշտոցը, մեծ խորաթափանցությամբ հետազոտել է ժամանակի հայերենի հնչյունները, պարզել դրանց համակարգը և դրան համապատասխան ստեղծել գրերը:

* * *

Բուն առումով հայ քերականագիտությունն սկզբնավորվում է Գրոնիսիոս Թրակացու «Արվեստ քերականության» աշխատության հայերեն թարգմանությամբ, որն, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել V դ. երկրորդ կեսին: Թրակացու քերականությունը գրվել է մ. թ. ա. II—I դդ. սահմաններում և կարևոր դեր խաղացել ոչ միայն հունարենի, այլև բազմաթիվ լեզուների քերականագիտության մշակման ասպարեզում: Հայ ձեռագրերի հարուստ ժառանգության մեջ պահպանվել է նրա թարգմանական բնագիրը, նրա շուրջը միջնադարում ստեղծվել է մեկնողական հարուստ գրականություն: Նոր ժամանակներում և մեր օրերում այդ երկին և նրա հայերեն թարգմանությանը նվիրվել են մի շարք հետազոտություններ⁴⁶:

Թրակացու գործի թարգմանությունը նշանակալից երևույթ էր հայ մշակութային կյանքում: Դրանով ոչ միայն հնարավորություն էր ընձեռվում մայրենի լեզվով ծանոթանալու ամենամշակված քերականության օրինակին, այլև լիովին գիտակցելու քերականական ուսմունքի դերը և նրա հանդիպարումով արժեքավորելու հայոց լեզվի կառուցվածքային առանձնահատկությունները: Նրանից եկող շատ տերմիններ, հասկացություններ և նույնիսկ սահմանումներ նույնությամբ կամ որոշ փոփոխումներով լայնորեն գործածվում են արգի քերականագիտության մեջ: Բայց ոչ միայն այդ: Հայերեն թարգմանությունը որոշակի արժեք է ներկայացնում նաև ժամանակի հայերենի մի շարք առանձնահատկությունների արտացոլմամբ: Թեև այն գրված է հունարենի համար, սակայն, ինչպես ցույց են տալիս նորագույն հետազոտությունները, նրանում տեղ են գտել նաև հայերենի մի շարք առանձնահատկություններ⁴⁷, և

⁴⁶ Grammaire de Denis de Thrace par M. L. CH Girbied, Paris, H. Adonci, Дионисий Фракийский и армянские толкователи, Пг., 1915, Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1984: Նա հրատարակել է նաև՝ Դավիթ Քերական, Մեկնութիւն քերականին, «Բանբեր մատենադարանի», հ. 3, 1956: Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971:
⁴⁷ Տե՛ս Գ. Զահուկյան, էջ 61—76:

այդպիսով թարգմանությունը տեղ-տեղ ստացել է փոխադրության բնույթ: Այդ հանապարհով հայերենի իրողությունները դառնում էին գիտական քննության առարկա. դրանով դուռ էր բացվում հայոց լեզվի գիտական ուսումնասիրության համար: Այս հանգամանքն ավելի ցայտուն է երևում մեկնողական գրականության մեջ:

Թրակացու քերականության վերաբերյալ V—IX դդ. (դրանից հետո էլ՝ մինչև VII—XIV դդ.) գրվել են բազմաթիվ մեկնություններ, որոնցից այս կամ այն չափով մեզ են հասել Դավթի, Մովսեսի, Անանուն մեկնիչի, Ստեփաննոս Սյունեցու, Համամ Արևելցու գործերը⁴⁸: Դրանք թեև բոլորը չեն, սակայն որոշակի պատկերացում են տալիս նշված ժամանակաշրջանում հայ իրականության մեջ ծավալված քերականագիտական-մեկնողական գրականության վերաբերյալ: Այդ երկերի արժեքն ամենից առաջ այն է, որ դրանք գրեթե ինքնուրույն քերականության դեր են կատարել: Ընդհատ է, մեկնությունները տարբեր կողմերից բացահայտում էին Թրակացու քերականության դրույթներն ու կանոնները, բայց, միաժամանակ, ուղղված էին դրանց լույսի ներքո հայոց լեզվի կառուցվածքային երևույթները դիտելու և սովորողներին ըմբռնել տալու նպատակին:

Բացատրության նյութը Թրակացու քերականությունն էր, ուստի մեկնիչներն այդ շրջանակներում իրենց երկերը պիտի շարադրեին որոշ կաշկանդաձությամբ, բայց նրանք ավելի ազատ էին, քան թարգմանիչը, քանի որ աշխատանքի բնույթը նրանց հնարավորություն էր ընձեռում հանդես բերելու իրենց ըմբռնումներն ու մոտեցումը: Այդ երկերի արժեքը բարձրացնում է նաև ցուցադրվող այն նյութը, որը ներկայացնում է ժամանակի հայերենի կառուցվածքային իրական առանձնահատկությունները: Այստեղ այդ կողմն ավելի ցայտուն է, քան «Քերականության» հայերեն թարգմանության մեջ: Բացատրություններ տալիս մեկնիչները հաճախ դիմում էին հայերենի փաստերին ու ցույց տալիս համապատասխան կամ համանման երևույթները: Այստեղ մենք զբոսնում ենք ընդունելի օրինակներ ոչ միայն ընդունված գրավոր լեզվից, այլև բարբառներից: Հայոց լեզվի պատմության և մասնավորապես պատմական բարբառագիտության համար թանկարժեք տեղեկություններ կան տարբեր մեկնիչների երկերում: Իբրև նմուշ հիշենք Անանուն մեկնիչի վկայությունն այն մասին, թե ինչպես միևնույն բաղաձայնը գրավոր լեզվում ու բարբառներում հանդես էր գալիս տարբեր արտասանությամբ⁴⁹ կամ՝ մի շարք բարբառների հիշատակումը Ստեփաննոս Սյունեցու կողմից: Սյունեցին (մահ. 735 թ.) մայրաքաղաք Գվինում ընդունված («ոստանիկ») լեզվի հետ թվում է ? գավառաբարբառ՝ Կորձեթի, Տալթի, Խութի, Չորրորդ Հալթի, Սպերի, Սյունիթի և Արցախի⁵⁰: Այս տեղեկությունները պետք է ստույգ համարել, քանի որ այդ բարբառների գրաված դիրքն ու անվանումը համապատասխանում են պատմական Հայաստանի ազգագրական աշխարհագրական բաժանմանը:

⁴⁸ Դրանց հրատարակված բնագրերը տե՛ս Ն. Ազնեց, էջ 77—287: Նույն տեղում զետեղված է նաև Գրիգոր Մագիստրոսի մեկնությունը:
⁴⁹ Նույն տեղում, էջ 149:
⁵⁰ Նույն տեղում, էջ 187:

Քերականագիտական-մեկնողական երկերն ունեցել են և՛ գործնական, և՛ տեսական նշանակություն: Դրանք օգտագործվել են դպրոցներում ու գրչության օջախներում և միաժամանակ հող են նախապատրաստել ինքնուրույն քերականությունների ստեղծման համար:

Քերականագիտության և դրան համադրված այդ ճյուղերի զարգացումը կարևոր նշանակություն ունի լեզվի մշակման գործում: Սակայն լեզվի զարգացման մեջ գլխավորը դրա ներքին բարեշրջությունն է՝ սեփական օրենքների ծավալումով, դրա էությունից բխող, ժողովրդի կյանքն ու մտածողությունն արտացոլող փոփոխություններով: